



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*17 հոկտեմբերի 2011 թվականի
թիվ 470-Ա, քաղաք Երևան*

**«ԱՐԵՉԱ» ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի հոկտեմբերի 17-ի դռնբաց նիստում «Արեգա» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկեց Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2010 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպումների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը 2011 թվականի հունիսի 9-ին Հանձնաժողովի նախագահի թիվ ԱՇ-1533 գրությամբ (այսուհետ նաև՝ Գրություն) դիմել է Ընկերությանը՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն, ներառյալ՝ բացատրություններ, փաստարկներ և պարզաբանումներ Ընկերության մասնակցությամբ տեղի ունեցած վերակազմակերպման վերաբերյալ:

Ընկերությունը Գրությունը ստացել է 2011 թվականի հունիսի 15-ին, որով պահանջված տեղեկատվությունը Ընկերությունը պետք է ներկայացներ մինչև 2011 թվականի հունիսի 29-ը ներառյալ, սակայն այն ներկայացվել է Հանձնաժողով 2011 թվականի հուլիսի 19-ին: Այդ կապակցությամբ Ընկերությունը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ տեղեկատվությունը ներկայացվել է ուշացումով Ընկերության գլխավոր հաշվապահի հարգելի բացակայության պատճառով:

Տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար Հանձնաժողովը 2011 թվականի հուլիսի 29-ի «Արեգա» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 319-Ա որոշմամբ հարուցել է վարչական վարույթ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 2-րդ մասի

համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը:

Օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Հանձնաժողովը ««Արեգա» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով հաշվի է առնում, որ Ընկերությունը գործունեություն է իրականացնում պահածոների արտադրության ոլորտում, ինչպես նաև տուգանքի մեծ չափի հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «ա», «գ» և «թ» կետերը, 28-րդ հոդվածի 2-րդ մասը, 31-րդ հոդվածի 2-րդ մասը և 36-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. Հանձնաժողովի նախագահի թիվ ԱՇ-1533 գրությամբ պահանջված տեղեկատվությունը Գրությամբ սահմանված ժամկետում չներկայացնելու համար ««Արեգա» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով:

2. Դիմել՝ ««Արեգա» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 1-ին կետով սահմանված տուգանքի վճարումը հավաստող տեղեկատվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը ««Արեգա» պահածոների գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԱԲՈՅԱՆ